

ւորութեան մէջ և ապա նրանով որ այդ քրիստոնէական ճշմարտութիւնը փիլիսոփայական — կրօնական եղանակով արտայայտուանդրանիկ փորձերից մէկն է:

Թարգմ. Յ. Վ.



### ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԲՐՈՆԻԿՈՆ

ՆԱԹՈՂԻՆ ԵՎԾՂԵՑԻ

— Լեւոն ԺԳ. պապը Հայ կաթողիկոսների կաթողիկոս գերապայծառ Ազարեանին դարձեալ 20,000 ֆրանկ է ուղարկել իրրև նպաստ փոքր Ասիայի Հալաճուած Հայ քրիստոնէականներին: Սրանով պապի ուղարկած նպաստի գումարը կը հասնի 70,000 ֆրանկի: Աւրախալի է, որ հարիւր հազարաւոր Հայ կաթողիկոսներին օգտին դոնէ այդքան նպաստ է ուղարկուում որովհետեւ մինչև ցարդ Եւրոպայի ցամաքային երկրներից այդ առաջին նպաստն է յօգուտ Հալաճեալ Հայերի, Եւրոպայի ցամաքի ժողովուրդները կարծես թէ քրիստոնէական և մարդասիրական զգացմանց անգամ չեն արժանացնում Հայերին մինչև իսկ այն վայրկենին, երբ նրանց ականջին հնչում են. « ի սէր մարդկութեան և ի սէր քրիստոնէութեան օգնեցէք մեզ, 100,000 հոգի կոտորուել են մեզնից և 500,000 սոված, անտուն և ցրտի ու հիւանդութիւնների ենք մատնուած » (Allgem. Zeit.):

— Բողոքոյի իշխան Ֆերդինանդ Վորուրդի որդու հաւատափոխութեան խնդիրը պապի կողմից ընդդիմութեան է հանդիպում: Ինչպէս լրագիրներն հաղորդում են, պապն սպառնացել է Ֆերդինանդին բանադրելու: Մի այլ աղբիւրից հաղորդում են, որ պապն համաձայն է թող տալու Բորիս իշխանին օրթոդոքս մկրտուելու, եթէ միայն բողոքական եկեղեցին Հոռոմի գերիշխանութիւնն ընդունի և Ունիա յ ի մէջ մտնի կաթողիկ եկեղեցու հետ:

— Վաթիկի եկեղեցուն ամենայն տեսակ մեղադրանք յարմարեցնում են, սակայն ոչ երբէք եւոանդի պահասութիւն. ահա մի օրինակ ևս. հազիւ հրատարակուեց տիեզերական պատրիարքի շրջաբերական պատասխանը պապին, որ արդէն լոյս տեսաւ դրա հերքումն: Այդ հերքման տեսքը ծախուում է այժմ Վ. Պոլսի բանուկ փողոցներում և յոյն եկեղեցիների բակերում:

— Պապի միարարական ձգտումների ընդդէմ հետզհետեւ առաջ են բերում այնպիսի ծանրակշիռ փաստեր, որոնք ամենին չեն համաձայնում Լեւոն ԺԳ. — ի խաղաղասիրական կոչումներին, Աւստրիոյ

կայսրութեան բոլոր կողմերից միաբանական ժողովրդների կողմից անասելի արտունջներ են լինում օրթոդոքս միարանական ուսմանները, ներքողովիացիք և Բոսնիացիք յիսուսականների ձանկերին են մտանուած և դրանք արդէն քայլ առ քայլ ոչնչացնում են այդ ժողովրդների եկեղեցական ինքնուրոյնութիւնները, Գալիցիայի առաջնորդ Սեմբրատովիչ մտորայութիւն իւր մեծամեծ ծառայութեանց համար, որ ցոյց է տուել պապական եկեղեցուն, արժանացել ծիրանաւորութեան:

Միարանական եկեղեցու գլխին եկած փորձանքների մասին նոյն իսկ կաթողիկոսները չեն քաշուում պատմելու, Լաւիսի և Ռամբոյի խմբագրութեամբ վերջին տարիներս հրատարակուող վերին աստիճանի հետաքրքրական ընդհանուր պատմութեան մէջ (Histoire generale du IV Siecle à nos jours, ed. par Lavissee et Rambaud, T. V, Paris 1895 եր. 720 և 721)

յառաջ է բերուած այն սոսկալի հալածանքների նկարագիրը, որ կրել են կաթողիկ եկեղեցու հետ միացած օրթոդոքսները: Այս հալածանքները ոչ մի կերպով տարբեր չեն հուգենոտաների կրած հալածանքներից, կամ նոյն իսկ հալածանքներից, որ այսօր Հայ քրիստոնէականներն են կրում Տաճկաստանում: Մեր եկեղեցուց բռնի խլած 40,000 հայերի կրած հալածանքները այդ շրջաններին էին և յայտնի են մեր եկեղեցական պատմութեան մէջ, « Նիկոլ Թորոսովիչ » պատմութեան անունով:

— Այս տարի յուլիսի 6-ին լրացաւ պապական եկեղեցու վերջին ժողովի 25-ամեակը, Եկեղեցական թերթերը հետաքրքրական տեղեկութիւններ են հաղորդում այդ ժողովի մասին: Պիոս պապը մինչև անխալախանութեան վարձպետութեան ժողովը գումարելը 2 տարի շարունակ եպիսկոպոսների թիւն սկսաւ շատացնել, բայց որովհետեւ թեմեր չը կային, ուստի այդ եպիսկոպոսները ձեռնադրուում էին in partibus infidelium (ի բաժնի հեթանոսաց), և ինչպէս ծագրելով ասում էին այն ժամանակ, այդ եպիսկոպոսների թեմերը լուսնի վերայ էին, Վատիկանի ժողովին մասնակից էին 770 եպիսկոպոս, որոնցից 300 հոգի պապինցն էին ուճիկ ստանում, Իտալացի եպիսկոպոսների թիւն էր 276, որից պապի թեմից միայն 143 եպիսկոպոս 2/3, միլիոն ժողովրդի համար, մինչ եւրոպական բոլոր միւս կաթողիկոսների կողմից ներկայ էին 156 եպիսկոպոս միայն:

— Այս տարի սեպտեմբերի 3—8 Բրիւսսէլում տեղի ունեցաւ « Երբ որդ միջազգային կաթողիկական գիտնականներ ժողովը », Այդ ժողովում 8 բաժիններ էին աշխատում. ահա դրանց զբաղումների ցանկը. 1) կրօնին վերաբերող

գիտութիւններ. 2) փիլիսոփայական գիտութիւններ. 3) իրաւարանութիւն. 4) պատմութիւն. 5) բնական գիտութիւններ. 6) մարդարանութիւն. 7) լեզուաբանութիւն. 8) քրիստոնէական զեղարուեստ. Ժողովին մասնակից էին 1,500 կաթողիկ գիտնականներ, որոնք և ստորագրեցին մի որդիական ուղերձ առ Հռովմայ պապը:

ՕՐԹՈՂՈՒՔՍ ԵՎԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՑ ԵՎԵՂԵՑԻ.

— Օրիէնուորդի առաջնորդ սրբազան Մակար Եպիսկոպոսն այս ամառ քարոզիչ առաքեալ էր ուղարկել Ղրխըզների մէջ. այս ձեռնարկութեան հետեանքների մասին այժմ նոյն թեմի «վիճակային համաւարերն» շատ հետաքրքրական զեկուցումներ է տպագրում: Ինչպէս երևում է այդ զեկուցագրից, քարոզիչ քահանայի կարօտութիւն ունին ոչ թէ Ղրխըզներն, այլ նրանց մէջ ցիրուցան ապրող ուղղափառ ուսանողները: Անպատի մէջ և Ղրխըզների հետ խառն ապրող այս քրիստոնեաները գրեթէ մոռացել են իրենց քրիստոնէութիւնն և փոխանակ նրանց վրայ ազդելու, իրենք են նեթարկուել այդ վաչկատուն վայրենիների ազդեցութեան: Քարոզիչ քահանան այդ տխուր փաստի մի քանի օրինակներըն է յառաջ բերում: այսպէս մի ծերունի ուսու, որ երկար տարիներ Ղրխըզների մէջ ապրել էր և նրանց լեզուով ազատօրէն խօսում էր, սասց քահանային. «կարծեմ թէ մեզք է Ղրխըզներին իրենց հաւատից դայթակղեցնելն ու քրիստոնէութեան դարձնելը»: Մի քանի ուսանող մոռացել են անգամ, որ իրենք ուսու են և ոչ զրխըզ և միայն քահանայի գալուստն է նրանց սթափեցրել:

Ձեկուցագրին նայելով մի քանի Ղրխըզներ սիրով լսել են քարոզչի խօսքերն և մխիթարուել սուրբ գրքերի ընթերցանութիւնով:

— «Ղուլնեան վիճակային համաւարերի» հաղորդելով մեծ ընդունելութիւն են գտնում ժողովրդից արտաքոյ ժամերգութեան ընթերցանութիւնները: Աերջին տարիներս ուսաց եկեղեցականները ժողովրդին կրթելու նպատակով տուն և կիւրակի օրերին եկեղեցուն կից մի դահլիճում և կամ եկեղեցիներում իսկ ընթերցանութիւններ և սուրբ գրքերի բացատրութիւններ են սահմանել, որոնց ունկնդրելու համար ժողովուրդը սիրով է յաճախում:

— Լարաւային Ռուսաստանում մանաւանդ արեւմտեան կովկասեան գաւառներում, ծխախոտի մշակութեան ընդարձակ ծաւալ ստանալու պատճառով տարածուում է և անբարոյականութիւնը, Իւրին աշխատանքն ու մեծ օրավարձն գրաւում է այդ

կողմերը շատ աղջկանց ու կանանց, որոնք հեշտութեամբ վաստակում են և չափազանց ուրախ կեանք են անցկացնում ծխախոտի մշակման վայրերում: Ոչ միայն ամուսնացած կանայք ու չափահաս աղջկանք, այլ նաև 11-12 տարեկան մատաղահաս աղջիկներ վարակուած են այդ տեղերում քայքայիչ փտերով: Ռուս հոգեւորականութիւնը այս շարիքի առաջին անելու համար կառավարութեան աջակցութիւնն է խնդրում:

— Կանանց կրթութեան մի հետաքրքրական արդեւածիքի մասին հաղորդեց վերջերս «Ռուսական միտք» կոչուող ամսագիրը: Ինչպէս երևում է ուսու զիւղացոց մէջ տարածուած է այն կարծիքը, թէ գրել կարգալ պէտք է ուսանին միմիայն այն աղջիկները, որ պիտի կոյս դառնան, «սեւազգեստները»: Ինչպէս կոչում են նրանց, Կան գաւառներ, ուր բոլոր դպրոց յաճախող աղջկանց թիւն հազու է հասնում 150-ի, այսինքն ամէն մի դպրոցում 10-15 հոգու: սրա պատճառն այն է, որ զիւղացիք չեն կարողանում դպրոց յաճախող աղջկանց համար ձմերային տաք զգեստներ կարել, այդ նրանց համար չատ թանգ է ուստի աւելի լաւ են համարում, որ աղջկերքը ձմեռը տանը փակուած և տգէտ մնան, քան թէ ծնողներին ծախքերի մէջ ձգեն ձմերային զգեստներ կարել տալով: Այս շարիքի առաջն անելու համար մի ուսու քահանայ 1893 թուին Ռոսսուշի գիւղում ամառային դպրոց է հաստատել, ուր ուսանում են միայն ամառը, այս փորձը յաջողուել է ու այն զիւղում, ուր ձմերային դպրոց էին գնում 2 հոգի միայն, ամառայինը յաճախում են 50 աշակերտուհի: Ահա մի նորանշան գործօն Ռուսաստանի լուսաւորութեան արգիլող-ցուրտը:

— Այս տարի սեպտեմբերին վրաց եկեղեցականները տօնեցին Իմերէթիայի առաջնորդ սրբազան Գարրիէլ եպիսկոպոսի 35-ամեայ յօրելեանը, Այդ ականաւոր եկեղեցականը ծնուել է 1825-ին և ըսկզբնական կրթութիւնն ստանալով Թիֆլիզի հոգեւոր դպրոցում, կատարելագործուել է Պետերբուրգի ճեմարանում: այն տեղ նա բացի եկեղեցական գիտութիւններից ուսումնասիրել է և փիլիսոփայութիւն. 1850-ին ստացել է մագիստրոսի աստիճան, իսկ 1854 քահանայ ձեռնադրուելով նուիրուել է ուսուցչութեան, երկու տարի անցնելուց յետոյ կորցնելով իւր ամուսնուն, նա վանք է մտել, իսկ 1860 թ. սկսած նա Իմերէթի առաջնորդն է և Կովկասեան օրթոդոքս եկեղեցականների մէջ առաջնակարգ տեղ է գրաւում: Սրբազան Գարրիէլ եպիսկոպոսը և մատենագիր է: նրա «փորձնական հոգեբանութեան հիմունք» կոչուող շարագրութիւնն մեծ հաւանութեան է արժանացել իւր ժամանակ, Գարրիէլ եպիս-

կոպոսն անուանի է նաև իրրև քարոզիչ, նորա ազգու խօսքը շատ անգամ վճռական ազդեցութիւն է ունեցել: Սրբազանի քարոզների ժողովածուն երեք անգամ տպագրուել է վրացերէն, թարգմանուել է անգլերէն և ռուսերէն: Գարրիէլ եպիսկոպոսի գործունէութեան մի մասն ևս նուիրուած է եղել քարոզութեան Արխաղիայում և Սուանէթիայում: այս գործունէութեան մասին մեծ գովասանքով են խօսում նոյն իսկ ռուսները: Իրրև առաջնորդի նրա գործունէութիւնը յատկապէս նուիրուած է եղել իւր հօտի մտաւոր մակերևոյթը բարձրացնելուն և քահանայից վիճակն ապահովելու: Ահա մի վիճակաւոր առաջնորդ որի կեանքի ռուսումնասիրութիւնը շատ օգտակար կարող էր լինել ամէն մի կեկեղեցականի համար:

— Սիրիբի մեծ երկաթուղու շինութեան հետ խնդիր է յարուցուելու և եկեղեցիների ու դպրոցների շինութեան մասին. Սիրիբում առ հասարակ քիչ են եկեղեցիք: ուստի և աղանդաւորները մեծ յաջողութիւն են գտնում: Սիրիբի երկաթուղու ծախքերի մէջ մտցրած են և եկեղեցեաց շինութեան ծախքեր և արգէն շինուած են 9 եկեղեցի-դպրոց: 9 առանձին եկեղեցի և 14 դպրոց:

— Ըուրջբալթեան նահանգներում դպրոցական նոր օրէնքի հրատարակման են սպասում. արգէն իսկ հրատարակուել են նախապատրաստական խորհուրդների արձանագրութիւնները: որոնցից երևում է: որ այդ գաւառների զիւղական դպրոցների զեկավարների կարծիքով առաջին և եական խնդիրն ռուսերէնի աւանդումն է: որ զօրացնելու համար Տնարաւոր է համարուում առաջիկայ իսկ ձմեռուանից բոլոր առարկաներն ռուսաց լեզուով աւանդելու:

— Արթուութիւնը պարտաւորեցուցիչանելու խնդիրն աւելի և աւելի հերթական է դառնում Ռուսաստանում: մեծ է այդ գործին համակորոշների թիւն: սակայն աւելի ևս շատ են հակառակորդները: Սրանցից շատերը սկզբունքով կրթութեան հակառակ են. նրանք այն կարծիքի են: որ կրթութիւնը տէրութեան վնասակար է: բայց կան և այլ տեսակ հակառակորդներ: նրանք սկզբունքին հաւանում են: իսկ գործադրութիւնն անհնարին են համարում: Այս տեսակ հակառակորդների կարծիքով տէրութիւնը պէտք է գեո 250,000 դպրոց բանայ և տարեկան 125,000,000 ռուբլի ծախք աւելացնի: Այս հաշիւը չեն ընդունում շատերն և ապացուցանում են: որ հերիք կը լինի միայն 25,000 նոր դպրոց բանալ զիւղերում և 6000 քաղաքներում և այս բոլորը կը կառավարուի 11,000,000 ռուբլով տարեկան:

Գրամական այս ծանր բեռը բառնալու համար առաջարկուում է: որ վանքերն օգնեն տէրութեան և իրենց ստացած նուէրները գործ դնեն դպրոցների վերայ:

— Ռուսաց ծխական քահանաներից ոմանք նոր տարուան եկեղեցում դիմաւորելու միտքն են յըղացել: Մի քահանայ նկարագրում է «Եկեղեցական համրաւարների» մէջ այդպիսի մի տոմախմբութիւն: 1894 թ. դեկտ. 31-ին այդ քահանան իւր միաբանակիցների և դպիրների հետ մի ընդ հանուր հաշիւ է պատրաստում անցած տարուան եկեղեցական կեանքի մասին և երբ գիշերը ժողովուրդը եկեղեցի է հաւաքուում կարգում է նրանց: ապա զոհութիւն է մատուցանում Աստուծոն և հսկումն է կատարում ճիշդ նոր տարուայ առաջին ժամին: Այսպիսի տոմախմբութեան բարոյական նշանակութիւնը գովելով «Տորոյեան վիճակային թերթը» առաջարկում է առաջիկայ նոր տարուան այս ձևով դիմաւորել:

ԲՈՂԱՐԱՄԱՆ ԵՆԾՂԵՑԻ.

Հոկտեմբերի վերջին Բոլղարիայի մայրաքաղաքում տեղի ունեցաւ Բոլղարիոյ ազատութեան համար նահատակուած դիւցազններից մէկի՝ Իդնատոս սարկաւազ Լեւկու արձանի բացումն: Լեւկին 23 տարեկան հասակիցը նուիրել էր իւր անձը հայրենիքին: նա մտել էր ժողովրդի մէջ իրրև քարոզիչ ազատութեան: ամէն տեղ նա իւր հայրենակիցներին բռնակալի շղթան կոտորելու էր դրդում: Ցանն և երկու տարի շարունակ Լեւկին ազատութեան քարոզը կարգաց: նա երևում էր ժողովրդի մէջ երբեմն սարկաւազի զգեստով: երբեմն Սոփիայի զիւղականի տարազով: երբեմն աղքատի ցնցոտիներով և վերջապէս երբեմն ժողովրդական ուսուցչի համեստ հագուստով: այս ձևով նա շրջեց ամբողջ Բոլղարիան: Քաղաք և գիւղ չը մնաց ուր Լեւկին ոտք չը դնէր և իւր նպատակին ծառայելով ստիպուած չը լինէր ծածկուել տաճիկ ոստիկանութիւնից: Ապստամբութիւն պատրաստելով՝ նա 5 տարուան մէջ ազատութեան մասնախմբեր կազմեց բոլոր քաղաքներում և գիւղերում: Աերջապէս նա ընկաւ տաճիկների ձեռքը: 1872 թուին վիրաւորուած գլխով և ձեռքով ձերբակալուեց Տըրնովում և բերուելով Սոփիա դատապարտուեցաւ կախազանի: Գատավճիւր գործ դրուեցաւ 6-ին փետր. 1873 թուին: Լեւկուն արձան է կանգնած այն տեղում: ուր նրան կախցին: Հոկտեմբերի 22-ին: ս. պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեցաւ Սոփիայի մայր եկեղեցում: ուր ներկայ էին երկրի իշխանը: բոլոր բոլղարական սինոդն և մետրոպոլիտ Պարթենիոսը: Փերգինանդ իշխանը մի ներբողական ճառով դրուատեց Լեւկուն: